

րուն թէեւ Իսրայէլ Օրիի ժամանակա-
կիցները հաւատ չընծայեցին... եւ հարկ
եղաւ մինչեւ 19րդ դարու երկրորդ կէ-
սին զալ ազգանուէր Օրիահաւատներ ու-
նենալու որոնք քաջարար մինչեւ մեր օ-
րերը ցնորատեսներու սերունդներ հաս-
ցուցին :

Ի՞նչ կրնար ըլլալ քանի մը Հայկա-
կան եկեղեցական նշխարներու արժէքը
Հոսովի համար որուն հերիւրանքով Ոնո-
փըրիտներ եւ Ղըմպիկներ կը յուսային
իրենց գործակիցներ շահիլ ընդդէմ Յա-
կոբ Զուղայեցիի: Ո՞վ պիտի թեւ ու թի-
կունք կանգնէր զինուորապէս Յա-
կոբ Զուղայեցիի եղբօր որդի Մանուէլին
եթէ նոյնիսկ հրաշքով ան կարենար Վը-
րաստան երթալ առանց թուրքերու կամ
Պարսիկներու ձեռքը իյնալու: Ի՞նչ բա-
նակ էր որ Մանուէլը Հայկական դահին
վրայ պիտի նստեցնէր, Պարսկահայաս-
տանը կարենար գրաւել: Մենք հարկ
չենք տեսներ հարցումներու շարքը եր-
կարել հոս: Այս ողորմելիօրէն տղայա-
կան ստապատում ամբաստանութիւնն է
որ խարխալ կազմեր է Յակոբ Զուղայե-
ցիի ազատագրական պայքարին մաս-
նակցելու ենթադրութեան եւ անհաւա-
տալիօրէն ծիծաղելի հէքեթին, եւ ան-
կէ սնունդ տրուեր է Օրիական ցնորա-
բանութեան:

Այլուստ վկայութիւն չունինք «զոմն
մահմետականի» մասին որուն իրաւա-
սութիւն տուեր է Յակոբ Զուղայեցին «ի
վերայ վանօրէից եւ առաջնորդաց եւ ե-
կեղեցեաց, կարգաց եւ կրօնից, չհասի
եւ հասի քննութիւն առնել»: Մահմետա-
կան վերակացուն անունը չի տրուիր,
սակայն նոյն շունչով կ'ըսուի որ Կաթո-
ղիկոսը այս մէկը ըրաւ «հրամանաւ խա-
նին», անշուշտ՝ Երեւանի: Ենթադրենք
որ ճիշտ ըլլայ ասիկա եւ իրապէս մահ-
մետական վերակացու մը զրուած ըլլայ
կրօնական հաստատութեանց հասոյթնե-
րուն վրայ, Երեւանի խանին իսկ պա-
հանջքով էջմիածնայ տուրքերն եւ պարտ-
քերը պողիներէ եւ նման հասոյթներէ
գանձելու համար. բան մը՝ որ վանքին
այդ ժամանակուան անտեսական կացու-
թեան պատճառաւ զուցէ միակ միջոցը
նկատուած էր:

Չարմանալի աներեսութեամբ Ոնո-
փըրիտ Յակոբ Զուղայեցիին Երուսաղէմ
չերթալը, ուխտագրութեան կը նկա-
տէ, իսկ եթէ երթար հաւանարար կա-
թոլիկոսին գլխուն փորձանք պիտի բե-
րէին զայն Երուսաղէմ փախչելու ամբաս-
տանութեան տակ առնելով:

Շարունակենք:

«Եւթնեւտասներորդ՝ Շայպանի որ-
դի ոմն Յովանէս վարդապետ, որ վասն
իրիք ինչ յանցանաց նախնեաց նորին ձե-
ռապիր տուեալ էր Փիլիպպոս հոգեւոր-
տիրին նգովիւք եւ անիծիւք, զի ազգէ
յազգ մինչեւ ի կատարած եւ ի ծննդոց
նոցին ոք եպիսկոպոս կամ քահանայ կամ
վարդապետ եւ կամ այլ աստիճանաւոր
եւ ժառանգաւոր եկեղեցւոյ, եւ զնոյն
ձեռադիրն նգովից կամէր հոգեւորտէրն
կապարեայ զրով յեցուլ եւ հաստատել
յորմն սուրբ էջմիածնայ, եւ զինքն եւս
մինչ կենդանին է՝ ոչ թողուլ արտաքս ի
Հաղրակոյ մինչեւ ցմահ, եւ թէ երանէ՝
որոչեալ լինի ի կարգէ աստիճանաց ե-
կեղեցւոյ, եւ սա (Յակոբ Զուղայեցին)
ընդդէմ նգովից հոգեւորտիրին (Փիլիպ-
պոս կաթոլիկոսի) եւ ընդդէմ ուխտի
ձեռադրաց նորին եհան զնա ի Հաղրակոյ
եւ աքսորեաց զՄիսիթար վարդապետն
յաթոտոյ իւրմէ Տաթևւոյ առանց մեղաց
իրիք եւ առանց պատճառանաց, մինչ զի
ժողովուրդն եւս իրբեւ զորդիս որբաց-
եալս ի հօրէ աղաղակէին զկնի նորա, եւ
սա բռնութեամբ աքսորեալ զնա եւ
Շայպանի որդւոյն շնորհեաց:»

Նախ անկարգութիւն չէ մէկ կաթո-
ղիկոսէ նգովուած անձի մը ուրիշ կաթո-
ղիկոսէ մը արձակուիլը: Ո՞չ Շայպանի
որդի Յովանէս վարդապետի եւ ոչ
Տաթևի Միսիթար վարդապետին կենաց
ու գործունէութեան մասին որեւէ տեղե-
կութիւն ունիմ: Ամբաստանութիւնը
ծայրայեղ իրականութեան պարագային
իսկ, լուրջ բան մը չէ: Կ'երեւի թէ քի-
նայինդիւր ամբաստանող Ոնոփըրիտ սպա-
ռեր է իր ատելութեան եւ ստաբանու-
թեան ռազմամթերքը, եւ ստիպուած կը
բաւականանայ ըսելով. «Եւ այլ բանս
անկարգս եւ անուղղայ գործեալ իրս
(Յակոբ Զուղայեցիէ) կայ արարեալ,
զոր եւ հեթանոսական վարուց արտաքսը